# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

*Շարուր-Դարալագեազի գաւառը կազմում է Երևանեան նահանգի հարաւ-արևելեան մասը և տարածւում է 40° ու 30°,20′ հիւսիսային լայնութեան և 62°,35′ ու 63°,30′ արևելեան երկարութեան աստիճանների միջև։*

*Նրա սահմաններն են հիւսիսից՝ նոյն նահանգի Նոր-Բայազէտի գաւառը, արևելքից՝ Գանձակի նահանգի Ջիւանշիրի և Զանգեզուրի գաւառները, հարաւից՝ Երևանեան նահանգի Նախիջևանի գաւառը և արևմուտքից՝ Պարսկաստանը (Արաքս գետով) ու Երևանեան նահանգի Երևանի գաւառը։*

*Թէ դիրքով և թէ կլիմայով Շարուր-Դարալագեազի գաւառը բաժանւում է երկու մասի՝ լեռնային, որ կոչւում է Դարալագեազ կամ Վայոց ձոր և դաշտային՝ որ անուանւում է Շարուր։ Լեռնային մասը դաշտայինից տասն անգամ ընդարձակ է, սակայն վերջինս առաջնից անհամեմատ աւելի արգաւանդ։ Քաղաքական բաժանմամբ ևս Շարուր-Դարալագեազի գաւառը հայկական տիրապետութեան ժամանակ կազմել է երկու տարբեր գաւառակներ, լեռնայինը՝ Վայոց ձոր, որ պատկանել է Սիւնեաց աշխարհին, դաշտայինը՝ Շարուր, որ մասն է կազմել Այրարատեան աշխարհի։ Պարսկական վերջին տիրապետութեան ժամանակ էլ Վայոց ձորը ընկնում էր Նախիջևանի, իսկ Շարուրը՝ Երևանի խանութիւնների մէջ. այսպէս էլ Ռուսաց տիրապետութեան ժամանակ ընկան համանուն գաւառների մէջ, մինչև որ 1877 թուին կազմեցին մի առանձին գաւառ, բաժանուած երկու ոստիկանական շրջանների՝ Դարալագեազի և Շարուրի։*

*Ամբողջ գաւառը բռնում է 275750 դեսիատին 1498 ք. սաժէն տարածութիւն* [1]*), որից՝*

| | | |
|---|---|---|
| *1. Գիւղատեղի* | *886 դես.* | *2062 քառ. սաժէն* |
| *(Այս հաշւում միայն տնատեղ* | *790 »* | *1498 »* |
| *2. Գերեզմանատեղի* | *35 »* | *53 »* |
| *3. Ճանապարհներ* | *1762 »* | *806 »* |

[1]) Труды Закавказскаго Статистическаго комитета. Земельныя дачи Эриванской губерніи. Шаруро-Даралагезскій уѣздъ, *դեռ ևս անտիպ։*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. Արտեր | 42903 | դես. | 1454 | քառ. սաժէն |
| 5. Այգիներ | 1046 | » | 44 | » |
| 6. Անտառներ | 2057 | » | 2039 | » |
| 7. Մարգագետին | 1089 | » | 1295 | » |
| 8. Արօտատեղի | 201966 | » | 685 | » |
| 9. Ջրի տակ | 1314 | » | 1505 | » |
| Սրանից 1) Ջրանցքների տակ | 216 | դես. | 562 | » |
| 2) գետերի, վտակների և աղբիւրների տակ: | 899 | » | 495 | » |
| 10. Ոչ-արդիւնաբերող հողեր | 13747 | » | 1805 | » |

Շարուր-Դարալագեազի ամբողջ գաւառը չունի ոչ մի քաղաք, այլ միայն մի աւան, Բաշ-Նորաշէն, ուր կենտրոնացած են գաւառական հիմնարկութիւնները և ուր ապրում են գաւառապետը ու այլ գաւառական պաշտօնեաները։

Ամբողջ գաւառը բաժանուած է երկու ոստիկանական բաժնի և 11 գիւղական հասարակութիւնների, բաղկացած լինելով 162 գիւղերից, որոնցից միմիայն 32 հայաբնակ են։

Բոլոր բնակիչները պաշտօնական վերջին տեղեկութեան համեմատ 1902 թ. եղել են 81499 հոգի, հետեւապէս և իւրաքանչիւր ք. վերստի վրայ ընկնում է 31 հոգի։

Բնակիչները ըստ ազգութեան և կրօնի.

| | Արմատական | | Ժամանակ. | | Բոլորը | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Ար. | Իգ. | Միա. |
| Հայ լուսաւորչ. | 12073 | 10400 | 108 | 69 | 12181 | 10469 | 22650 |
| Ռուս. պրավ. | — | — | 229 | 25 | 229 | 25 | 254 |
| Վրացի » | — | — | 10 | 4 | 10 | 4 | 14 |
| Գերմ. լիւթ. | — | — | 23 | 1 | 23 | 1 | 24 |
| Թուրք շիա | 30050 | 24706 | 605 | 429 | 30655 | 25135 | 55790 |
| » սիւննի. | 285 | 251 | 3 | 3 | 288 | 254 | 542 |
| Քուրդ մահմ. | 724 | 567 | 358 | 295 | 1082 | 862 | 1944 |
| Ասիական այլ և այլ քրիստ. | 150 | 120 | — | — | 150 | 120 | 270 |
| Հրէայ մովս. | — | — | 2 | 1 | 2 | 1 | 3 |
| Կովկ. լեռն. մահ. | — | — | 8 | — | 8 | — | 8 |
| Իմիասին | 43282 | 36044 | 1346 | 827 | 44628 | 36871 | 81499 |